



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 33

ՇԱՐԱԲ

13 ՕԳՈՍՏՈՍ 1905

Կ. ՊՈԼՏՈՑ ՀԱՄԱՐ	ԴԱՒԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Ձր.
Վեցամսեայ . . . 25 »	Վեցամսեայ . . . 27 »	Վեցամսեայ . . . 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՅՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին ակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ունեւորութիւնը բնել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեւել ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին :

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛
Կ. Պոլիս, եւ քե՛ Դաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :


Հասր 40 փաւրա

ԱՐՏՈՂԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(کتابخانه جهان) مطبعه سی — باب عالی جاده سی ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի նաշսկի քիւ 23



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաւակի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ր

ՀԱՅՓԱՅՓՈՒՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է , սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը ,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՀԱՅՓԱՅՓՈՒՉ ԿԱՅՍ
ՄԱՍՆԱԿԱՆԱՐԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|------------|--|
| ԲՆՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼ. Ս.Թ.Ա | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ. Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼ.Ր.Ս | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵՐԻՍՏԱՐ | 2 արշը Պօյու , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 և
343 կրկին , Տիւզզուլուի առեւը :



BOVININE

Պ Օ Վ Ի Ն Ի Ն

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinineը կը պարունակէ զուտ մենդային մասերն եղան մսին , ուղեղին ,
ողնուղեղին և ֆոսֆաթներն ոսկրային կազմուածքին , խտացեալ վիճակի մէջ :

Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուրիչ դեղը , 27 տարիներէ ի վեր
ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաբոնի և Չինու համ-
բաւուոր բժիշկներէն . ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան
ուժասլուծութիւն, դակտրիս, անախորժութիւն, սաւնոխի խանգարում, քնդհա-
նուր չղալին սկարութիւն, նիւարութիւն, կուրծքի սկարութիւն, անարիւնութիւն և ըն-

Անգամ մը գործածութիւնը կը հաստատէ իւր անզուգական յատկութիւնը :

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐԲ , Պահճէ-գարու ,
Օսմանեան նամակատան ետեւի կողմը : Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դե-
ղորաններու և դեղորէից մթերանոցներու քով :



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ. 33

ՇԱԲԱԹ

13 Ognusnu 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դպրոցին պէտքը (խմբագրական) . — ՅՈՎՀ. Մ. ԱԶՆԱԽՈՐԵԱՆ : Մաղբանգ . — ԱՂ.Ք. ՓԱՆՈՍԵԱՆ : Հոս-հոսի նօթեր . — ԹՈՐՈՍԵԱՆ ԳՐԻԳՈՐ : Թափուր դաւնակը . (Ոսանաւոր) . — Հ. Յ. ՄՈՄՃԵԱՆ : Վայ է եկեր խմորին՝ սա անիծեալ քոյն-օղին . — ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ : Սեւը ներս ներմակը զուրս (Սառքեարի կեանքէն) . — Վ. ՓԱ. ՓԱԶԵԱՆ : Լաւաք . — ԼԵՒՈՆ ՇԱԹՐԵԱՆ : Երանութիւն (Ոսանաւոր) . — ՍՈԿՐԱՏ ՍԱՐԱՅԵԱՆ : Համոզում (Ոսանաւոր) — ՍՏԵՓԱՆ ԽԱԶՈՒՆԻ : Խնդուք . — Մ. ՄԱՐԿԱՐԵԱՆ : Կապիկներու առնաւորին մէջ (Հանրագիտակի քերթօնք) . — ԼՈՒԻ ԺԱՔՕԼԻՍ :

ԴՊՐՈՑԻՆ ՊԵՏՔԸ

Երանի քէ միւս զաւակս ալ աղջիկ ըլլար ,
ու ես հինգ հարիւր ոսկի պարտք ունենայի
հրապարակին վրայ : ՀԱՅՐ ՄԸ

Սա լուսաւորեալ դարուն մէջ երբ յետին ռամիկն անգամ սկսած է ճանչնալ ուսման կարեւորութիւնը և՛ հակառակ իր կարգաւ-գրեւէ բոլորովին անտեղեակ ըլլալուն՝ կողքայ իր պատանեկութիւնը դպրոցէն դուրս անցուցած ըլլալուն վրայ , կը ցտախ մանաւանդ իր ժամանակի դպրոցներուն խիստ ցանցառ գոյութենէն , ու ամէն անգամ որ պէտքն զգայ ուսման , սա սրտագին ու անկեղծ հաւաչանքը կընէ , երանի՛ք թէ քիչ մը գրեց-կարդաց գիտնայի , ուրիշ բան չէի ուզեր , այո՛ , այս լուսաւորեալ դարուն մէջ կըսեմ , երբ շնորհիւ մեր լուսամիտ Մեծ Վեհապետին , ամէն քայլափոխի դպրոցի մը կը հանդիպինք , ցաւալի և շատ ցաւալի է ըսել որ շատեր կան տակաւին , շատ մը ծնողքներ , որոնք չգիտցուիր ինչ անտեղի պատճառաբանութիւններով չեն ուղեր կարեւորութիւն տալ դպրոցին ու աւելի լաւ կը համարին տունը թողուլ , փողոցը ձգել կամ շուկան հանել իրենց սիրտուն մանկիկը , անփորձ պատանին , կեանքի պայմաններուն

անդիտակ երիտասարդը : Ասանկները սակայն կը նմանին այն անհաշիւ մարդիկներուն որոնք ժամանակին , նպատաւոր միջոցներու գոյութեան պարագային , բնաւ նկատի չեն առներ մեծ ու պզտիկ պարտքերու վճարումը , չեն ժողուրտուիր ու երբ կը հասնի ատենը տոկոսներով վճարելու զանոնք , կը շուարին կը մնան՝ միջիւնին դուռը ամի առնող ճպուռին պէս՝ չկրնալով գտնել ճշդաբանութիւնն ու եւէ միջոց մը : Ծնողքներու՝ իրենց զաւակներուն բարեկրթութեան հանդէպ ունեցած պարտականութիւնն ալ միեւնոյն բանն է , հետեւաբար ով որ ժամանակին կը թերանայ անիկա տեղը-տաներուն մէջ , ով որ չիտար իր զաւակը վարժարան , պիտի գայ օր մը որ պիտի ցաւի նպատաւոր ժամանակին անցնիլը , պիտի ողբայ իր չարդարացուելիք պարտազանցութիւնը և պիտի տուժէ դառնապէս :

Այս տղերքը գրած ատենս բնաւ նպատակ չունէի դպրոցին անհրաժեշտ կարեւորութեան վրայ ոգիսականներ կարդալու , որովհետեւ այս նիւթին վրայ գրուածները այնչա՛փ շատ են ու խնդիրը այնչա՛փ եփուած , որ այս մտտին զուրցուած խօսք մը աւելին համբաւաւոր քեմնիս փիլիսոփային տրոժէքն ալ չպիտի ունենար : Ուստի յարգելի ընթերցողներուս և ուհիներուս ներումը խնդրելով աւանդ չեղումիս համար , կանցնիմ բուն նիւթիս :

Բոլորովին ինքնօգնութիւնով , միմիայն անհատական ջանքերով բաւական կսկիկ գործի մը տիրացած պատուական հօր մը , բարեկամ թաղեցիի մը սրբատալուս ու անկեղծ հառաչանքն էր այն զոր յօդուածիս գլուխը գրի . « երանիք քեմնիս զաւակս աչ աղջիկ յընար . . . » :

Այդ բարեմիտ հայրը դեռ նոր ամուսնացուցած իր աղջիկը , երջանիկ կըզգար ինքզինքը տեսնելով իր աղջկան երջանկութիւնը՝ համեստ զարգացած ու գործը-գիտցող երիտասարդի մը թեւին տակ որ փեսայ անուանով եկեր զաւկի տեղ անցեր էր իրեն , բոլորովին հակապատկերը ցուցնելով իր միւս հարազատ զաւկին : Այս բարի մարդը , այս յարգելի բարեկամ շարունակելով իր տխուր տեսութիւնները կ'ըսէր . « մինչև հիմա այս գործովս ապրեցայ , կինս , զաւակներս ասկէ շահածովս պահեցի ու երբէք զրկանքի երես չցցուցի իրենց . պէտք չէ՞ր որ հիմակ աս տղան , որ եկած հասած , ամուսնանալու տարիքը թեւակախած է , դար նստեր աս պատրաստ գործիս գլուխը , ու մարդ ըլլար . ասանկ գործ մը ձեռք ձգելու համար որչա՛փ մարդիկ կան , կորով , ջանք ու եռանդ ունեցող ու չեն կրնար յաջողիլ . ա՛խ նահիշտութիւն ա՛խ . . . » :

Եւ շատ իրաւունք ունէր այդ աղնիւ մարդը , իր եկած հասած տղան , իր առոյգ ու կայտառ զաւակը թերութիւն մը միայն ունէր . ճահիլութիւնը : Եթէ դպրոց տեսած , բարեկրթութիւն ու զարգացում առած ըլլար ան , հիմա իր պատուական հօր թեւին տակ , անցած անոր գործին գլուխը , սորված արհեստին բոլոր գաղանիքը , նոր մշտմ մը պիտի տար անոր իր թարմ ուժերով և մեծ օգտակարութիւն մը պիտի առաջ բերէր :

Բարեկամ թաղեցիս , զաւկի երջանկութեան փափաքող այդ պատուական հայրը իր երկար պատմութիւններուն , իր ցաւառիթ խօստովանութիւններուն

մէջ ըրաւ նաև հետեւեալ յայտարարութիւնը որ իր չափազանց պարզութեան մէջ ոչ նուազ նշանակելի կէտ մըն է . « Գէշ ու անբարոյ մէկը չէ ան , ի՛նչ օգոս սակայն որ խրատներս չի բռներ , շուտով կը մոռնայ » : Շատ շիտակ , շատ անկեղծ էին այս յայտարարութիւններն ալ . այդ աղան բնականէն ունէր լաւ յատկութիւններ որոնք մշակուելով շատ աւելի լաւագոյն կրնային ըլլալ . բայց մե՛ղք որ անոնք կամաց կամաց կորսուելու վրայ էին : Ամէն օգտակար խրատ , ամէն բարեացակամ խորհուրդ , հազիւ վայրկեանական տպաւորութիւն մը գործած , կ'անհետանային , կ'երթային՝ անհետք ու անհետեւանք , այդ անմշակ գետինին — այդ չի զարգացած մտքին — վրայէն , որովհետեւ այդ գետինը երկար տարիներու բեռան տակ , բահի բրիչի երես չի տեսած , խլրրովին խոպան մնացեր էր :

Ծնողքներ՝ , դպրոց դրէք ձեր զուակները եթէ չէք ուղեր անոնց ապագայ թշուառութիւնը :

ՅՈՎՀ. Մ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ



Հաճոյալի , մի և նոյն ատեն օրուան տօնին յարմար սիւսբուիդ մը ընելու համար մեր յարգելի ընթերցողներուն , պատիւ ունինք արտատպել հոս՝ մեր սիրելի և անուղական բանաստեղծ Աղեքսանդր Էֆէնտի Փանոսեանի գողտրիկ մէկ ոտանաւորը , որ հրատարակուած է 1900 ի Աստուածածնի տօնին առթիւ :

Մ Ա Ղ Թ Ա Ն Զ

Այսօր արբանոյս քու ամուսնդ է սօն ,
— Տիրամայր Կուսին սօնն Հայ տմարի —
Մարի ,

Եւ սիրելիներդ ինձ սրէին պաշտօն
Որ քեզ մաղթանքներ ընել գամ արի ,
Մարի ,

* * *

Գողթ ու ներդաշնակ — կարծես քոչունի —
Անուն մ'ունիս որ քեզ շատ յարմարի ,
Մարի ,

Ո՞ր աղջիկ քեզ չափ արտի մեջ ունի
Անրապստ գանձեր սիրոյ գումարի . . .
Մարի ,

* * *

Ահա՛ միակ բանն որ քեզ կը մաղթեմ .
Վառ յոյսերուն պէս երկնից կամարի ,
Մարի ,

Թո՛ղ ժպտի քեզ Յոյսն յաւեւ քաղցրադեմ ,
Եւ հոգւոյդ Արեւն իսպառ չը մարի ,
Մարի :

Փափկութեան , շնորհաց վրայ հոգեկան ,
Մարդիկ նայուածքներ նետեն իմարի . . .

Մարի ,

Նուրբ ըզգացումներ , կիրք միտք ո՛ւր ո՛ր կան ,
Բաղիւն սառուցիկ քար ու մարմարի ,

Մարի ,

* * *

Մեք ու շատ շեսնեմք , քեքեւ զերք փետուր
Աղջիկներ առանց . . . քրտնամարի ,

Մարի ,

Փայլուն , բարբառուն ծաղիկ երկնասուր ,
Մեր սիրեն՝ հեզիկ բոյրդ հեշտանք համարի ,

Մարի ,

* * *

ՀՈՍ-ՀՈՍԻ

ՆՕԹԵՐ

Վ. Փափազեան և իր հիւանդութիւնը. — Վարժուհիին ձայնը. — Վարժապետներուն հարցում մը. — Խրատներ դրացուհիս Օր. Մ. ի՛ որ թերթ չը կարդար. — Երկաթուղիով ճամբորդելու անպատեհութիւնները, երբ մանաւանդ գաւազան մը ունիս ձեռքդ:

Կը ճանչնա՞ք Վ. Փափազեանը:

Ձեզմէ եթէ չճանչցողներ կան, անոնք ալ ապահովաբար անոնք են՝ որոնք . . . չեն ուղեր իրենց բաժնեգիրները վճարել:

Իսկ ես, ո՛չ բաժնեգիրն ունիմ վճարելիք և ո՛չ ո և է առնելիք տալիք իրեն և ի՞ր տեսարակին հետ. կը ճանչնամ զինքը անյիշատակ թուականներէ ի վեր և միշտ պիտի ճանչնամ, քանի որ ես ապրանք մը ունիմ ծախելիք և ան գնող վաճառական մընէ, որուն հետ բարւոք յարաբերութիւններ մշակելէ դատ . . . զայն փողոցին մէջ ա՛լ ճանչնալու և յարգական կերպով բարեւելու է:

Այսպէս, հասկցաք ուրեմն թէ՛ ինչո՞ւ կը ճանչնամ Վ. Փափազեանը, և ինչո՞ւ սիրաւի՛ր կերպով կը բարեւեմ զայն երբ փողոցին մէջ կը հանդիպիմ:

Cherchez la femme ըսած են Յուանաքիները, միշտ և յաւիտեան ամէն բանի տալիք կին փնտռելով. բայց ես կը փոխեմ և կըսեմ « փնտռեցէ՛ք դրամը »:

Արդէն երբ մեր Վ. Փափազեան սիրելի բարեկամին վերջին հիւանդութիւնը երթաք աչքէ անցընէք, պիտի տեսնէք թէ այդ հիւանդութեան միջոցով կին ըլլալէ աւելի զրամ է:

Այս ըսածիս ճշմարտութեան համոզուելու համար, թող ամբողջ անվճար բաժնեգիրները վճարուին մէկ օրուան մէջ, և երկինքի բոլոր սրբուհիները վկայ, անմիջապէս հիւանդութիւնը կանհետի, երկինք վարդազոյն կերեւի իր աչքին, ծառերը և ծաղիկները — ըլլայ նոյն իսկ ձմռան մէջ —

կը ծաղկին, շեփուռը աւելի մեղմիւ կը փչէ, Ձիթիլիք և Մառքօ հեշտ կ'երեւանան:

Այո՛, սիրելի բարեկամներս, մեր բարեկամին հիւանդութիւնը, քրոնիկ հիւանդութիւն մըն է, որ Ալէմ-տաղիով, Եադաճըքով չբժշկուիր, այլ մանտաբօսթով:

* *

Մեզի դրացի էր:

Յուրտ օր մը երբ ձիւնը կը տեղար, փողոցները մարդ չկար երբեք և շուներն անգամ իրենց ծակերը քաշուած էին, կառք մը կեցաւ և կին մը իր դոյքերով մեր քովի տունը իջաւ:

Անցան շաբաթներ, օրեր, ամիսներ և դեռ պատեհութիւնը չէի ունեցած դրացուհիս տեսնալու, որուն համար թաղեցիները կըսէին թէ վարժուհի է թաղային վարժարանի մը մէջ:

Օր մը, առտուն կանուխ, երբ դեռ թաղը ամբողջ կը քնանար, յանկարծ մեր քովի տունէն ձայն մը առի, անուշ անմահական ձայն մը, որ կարծես թէ՛ Եդեմէն կուգար: Մտածեցի պահ մը ինքնիրենս և համոզում գոյացուցի թէ՛ լսած ձայնս վարժուհիին տունէն էր և ոչ թէ Եդեմէն, որուն համար կըսէին թէ շատ հեռու է և միայն արդարները կերթան հոն:

Պատուհանը վազեցի աւելի մօտէն ըմբռնելու համար այդ հրեշտակաման ձայնը և աւելի մօտէն տեսնալու համար այդ ձայնէն տէրը եղող հուրին, պարիկը:

Հաղիւ մօտեցած էի պատուհանիս, երբ պեսայ ստուեր մը մարդակերպ արարածի մը, որ դէմք մը ունէր անուելիօրէն տղեղ: Անխնամ չըջաղգեստ մը, խառնիճաղանձ մաղերով, աւելի կը շեշտէր այդ կնոջ տեսակ մը վարժութիւնը, որ ինչ մեղքս պահեմ, վախցուց ինձի: Կինը, այդ այրած և կինը, կերպէր սակայն, որուն ձայնէն հրապուրուած, քունս կիսատ ձգած և պատուհանը վազած էի:

Այդ օրէն ի վեր ալ կարեւորութիւն չտալ սկսայ, այն առածին որ « մայրը տես, աղջիկը առ » կըսէ:

* *

Բան մը պիտի հարցնեմ ձեզի, ո՛վ սիրելի վարժապետներդ: Բան մը պիտի հարցնեմ, պարզ հարցում մը, որուն պատասխանելու համար հարկ չկայ որ մէկ մէկ ակադեմականներ ըլլաք:

Լսած եմ թէ դուք շատ մեծ, շատ վըսեմ, շատ խոշոր մարդիկ պիտի ըլլաք օր մը . . . ձեր մեռնելէն վերջ:

Ասիկայ լսած օրս մտադրեցի հարցում մը ուղղել ձեզի, որուն պատասխանելու համար պէտք չկայ որ օգնութեան կոչէք ակադեմիկոսներ եւ քրտինքի առուականներ հոսեցնէք ձեր այտերէն վար:

Մտիկ ըրէք եւ նայեցէ՛ք որ պատասխանէք, եթէ ոչ շատ գէշ գաղափար մը կաղմել պիտի տաք ձեր զրպանի վկայականին վրայ:

Ահա ցարցումը:

« Երբ ծանր մարդիկ ծովուն մէջ դդում կը կապեն իրենց թեւերուն թեթեւալու եւ ծովուն մակերեսը ելլալու համար, ի՞նչ կապելու են այն թեթեւ վարժապետները եւ վարժուհիները, որոնք ճամբան քալած ատենին միշտ վեր, դէպ ի վեր երկինք ելլալու հակամէտ են »:

* * *

Ի՞նչ տամ, ի՞նչ տամ մտածեցի օր մը, սա՛ մեր նախկին դրացուհիներէն մէկուն, որ թերթ չը կարդար:

Օր մը ամբողջ մտածելէ վերջ՝ որոշեցի հետեւեալ մէկ քանի խրատները տալ, իբրեւ մէկը որ միշտ բարձր կը մտածէ ասոր անոր եւ մանաւանդ դրացուհիներուն:

Սիրելի աղջիկս — իբրեւ հայր կը խօսիմ — դուն օր մը պիտի ամուսնանաս եւ օր մը ամուսին մը պիտի ունենաս, բարի տղայ մը, որ անպատճառ ոսկերիչ պիտի ըլլայ եւ մօրը մէկհատիկը: Ի՞նչ վրայ ամէն մարմնական եւ հոգեկան բարեմասնութիւններ փնտռելէ աւելի, օժտուի՞ր սնտուկին մէջ Հանրագիտակի այս թիւը պիտի փնտռէ, վստահ ըլլալու համար թէ՛ դուն ընտանեկան սիրուն բոյն մը կազմելու ամէն առաւելութիւնները ունիս:

Այսպէս, սիրելի աղջիկս, նախ ներքէ որ այսպիսի քեթիքսիզ կը խօսիմ քեզի հետ՝ եւ իբրեւ ընտանիքի հայր կը նկատեմ ինքզինքս:

Աղջիկս, նայէ որ եկեղեցի գացած ատենդ միշտ աչքերդ վար ըլլան եւ փէշերդ վեր, որպէս զի . . . չըջաղգեսող չցեխոտես:

Աղօթած ատենդ միայն սեղանին նայէ, չորս կողմը բաներ մը փնտռողի պէս նայուածքներ նետող աղջիկ մը, երբէ՛ք փրնտռող մը չունենար:

Կերակուր եփելը ամէն բանէ առաջ սորվէ եւ դաշնակը ամենէն վերջը:

Թուաբանութեան մէջէն միայն չորս գործողութիւնը սորվէ, երկրաչափական խնդիրն հաշիւներու մէջ մի՛ մտնար, որովհետեւ աշխարհք է, կրնայ ըլլալ որ մէջը մընաս . . . հաշիւներուն:

Երկու բան արգելուած է ու է աղջկան: Մէկ մը վրան բաց խաղեր եւ մէկ մըն ալ անկիւնի նպարավաճառը բարձրաճայն կանչելը:

Մարդ ըլլալու համար, սիրելի աղջիկս, երկու հրապարակագիրներ կան, որոնց յօդուածները պէտք է կարդալ:

Երբ նշանուիս, եւ առաջին կիրակին նշանածդ տուն գայ քեզի պտոյտի տանելու համար. նայէ որ ինքզինքդ ծանրէն ծախես, թեթեւ աղջիկները միշտ օդը ելլալու հակամէտ են:

Սիրելի աղջիկս, ամուսինդ ամուսնութեանդ տեւողութեան մէջ սիրէ՝ թէ՛ իբրեւ հայր, թէ՛ իբրեւ եղբայր եւ թէ՛ իբրեւ ամուսին:

Տունին մէջ միշտ ճաշակաւոր հագուէ՛ եւ ճաշակաւոր կերակուրներ եփէ, անճաշակ հագուած կին մը՝ անճաշակ կերակուրի մը պէս անմարսելի է միշտ:

Ուրախացիր երբ ամուսինդ ուրախ է, եւ տրտմէ՛ երբ տրտում է: Եթէ չես ուզեր որ տունդ Բաբելոնեան աշտարակի մը մէկ մանրանկարը ըլլայ:

Ինչպէս որ ամուսինդ միշտ պատրաստ է քու ետեւէդ երթալու, նոյնպէս դուն ալ պարտաւոր ես անոր ետեւէն երթալ: Որովհետեւ երբ երկուքդ ալ ծուռ ճամբաներէ երթաք, յետոյ կրնայ ըլլալ որ դարձեալ իրարու հանդիպիք եւ բաղխումնիդ սոսկալի ըլլայ:

Ահա սիրելի աղջիկս եւ սիրելի դրացուհիս խրատներ քեզի, որոնք պէտք եղած տեղը գործածելով, կրնաս օգտուիլ անոնց: մէ իսկ քարը գլխուդ, եթէ չես ուզեր մտիկ

ընել սա՛ խօսքերուս . . . որոնք ամառ օրով և 48 աստիճան տաքութեան մէջ նըստայ գրի առի միայն քու օգուտդ մտածելով :

Բարիք ընել կը սիրեմ . . . երբ անոնք առանց կուտի կը վերջանան :

* * *

Ներկաթուղիով ճամբորդած էք :

Ասլահովաբար այս հարցումին ամենքդ ալ «այո՛» պիտի պատասխանէք, քանի որ այնչափ շատ թիւ մը կը կազմեն Սամաթիացի, Գում-գաբուցի, Գարիթալցի, Բէնտիկցի և Մաքրի-գիւղցի ընթերցողներս :

Ես ալ ճամբորդած եմ ուրեմն :

Իմ ճամբորդութիւնս սակայն, որ Գում-գաբուէն մինչև Մաքրի-գիւղ էր, գաւաղանիս կորսուելուն պատճառ եղաւ :

Կիրակիս Մաքրի-գիւղ անցնելու համար անցեալ կիրակի շոգեկառք նստայ :

Հիմա ձեր մէջ կարծողներ կան թէ՛ կիրակիս շոգեկառքին մէջ անցնելու միտք ունիմ :

Ո՛չ, սիրելի բարեկամներս, շոգեկառք նստայ Մաքրի-գիւղ երթալու համար, երբ ճամբան ո՛ր և է կայարանէ մը իմ վախճան մտաւ սիրուն կին մը՝ իր պզտիկ զաւկին հետ մէկտեղ :

Ճամբորդութեան մէջ, երբ մանաւանդ մինակդ ես, շուտով կը բարեկամանաս : Ես ալ ճիշդ այդպէս ըրի : Բարեւեցի. բարեւեց. խօսեցայ. խօսեցաւ և հինգ վայրկեան վերջը նախկին բարեկամներ եղած էինք տիկնոջ և իր պզտիկ զաւկին հետ : Խօսակցութիւնը կը դառնար Բորթսմութի հաշտութեան պարագային և Մաքրի-գիւղի նորընծայ Տէր Յուսիկ քահանայի ձեռնադրութեան շուրջ :

Յանկարծ բարեկամուհիիս զաւակը, որուն ձեռքն էր գաւաղանս, եկաւ իմաց տալու մօրը թէ՛ «Պարոնին գաւաղանը, շոգեկառքին ճամբուն վրայ գտնուող և երուսաղէտի վանքին պատկանող կալուածներուն մէջ ձգեցի» :

Մայրը խնդաց. ստիպուած՝ ես ալ խնդացի և շնորհաւորեցի տիկինը որ ասանկ

խելացի զաւակ մը ունէր, և որ կը խօստանար աղագայ մեծ մարդ մը ըլլալ, գաւաղաններ ձգելով կալուածներու մէջ :

Տիկինը շնորհակալ եղաւ, բարեւեց և վար իջաւ վաղօնէն : Ես ալ վար իջայ, բայց առանց գաւաղանի :

ԽՐԱՏԱԿԱՆ. — Պզտիկ զաւակներ ունեցող կիներու հետ մի՛ բարեկամանաք և կամ եթէ կուղէք բարեկամանալ, գաւաղանն իշտուէ՛ք ձգեցէք :

ԹՈՐՈՍԵԱՆ ԳՐԻԳՈՐ

ԹԱՓՈՒՐ ԴԱՇՆԱԿԸ

Դաւեան մ'աղուր ու փառայել կը կենար, Սեմեակի մը մէկ անկիւնը զարդարուած, Որուն առջեւ կոյս մը բազմէր դալկահար, Մերթմունքներ բարձրացնելով առ Աստուած :

Ծալ ծալ վարսերն ալեաց նման վէսվէսող, Դաւեանուելով կը կախուէին ուսն ի վար, Ու դեպ ի վեր յառած աչքերն՝ կախարդող, Կը փնտռէր երբեմն մ'անհուն հրաւիր :

Բաւեկամ մ'եք եղա՛յ իրեն սրտակից .
Ու բախիծի ցուրտ խորակներ սարսուղին
Սրբ փրփրէն դեռալիք իր կեանքին,
Փառէր իսկոյն այդ դաւեանին խանդակից :

Բայց անողո՛ւ որդ մը տակաւ կը կրծէր
Իր եռութեան ներքնախարհը անյասակ .
Ու օր մըն ալ հուր երազներն ու իղձերն,
Սառնացան հոն այդ բաբախող կուրծքին տակ :

Արդ դաւեանը քափուր մընաց ճիւղ այն տեղ՝
Ուր երբեմն սիրոյ երգեր երգէին,
Չկա՛ն այլ եւս այն ձայները սիրազեղ,
Թաղցութիւններ ստեղծեցին կը բորին :

Հ. Յ. ՄՈՄՃԵԱՆ



ՎԱՅ Է ԵԿԵՐ ԽՄՈՂԻՆ

ՍԱ ԱՆԻՇԵԱԼ ՔՈՅՆ-ՕՂԻՆ

Մղելու համար ալիւիւն դեմ մարտ,
Ո՛հ, սա օրերուս երբոր ամեն մարդ
Մեյմէկ քարոզով երկար ու բարակ
Մեր քերթերուն մէջ գայ հրապարակ,
Որ լաւ մ'ընելով օղին ծաղր—ծանակ,
Թաւաճանիկանէն առնէ մեղանակ,
Ես ալ փոխարէն քանի մը խօսքի
Յուսալով կորզել հինգ—սասը ոսկի (!)
Առ այդ կարծիքներս վսեմ, խորիմաս...
Համոզկեր ոնով յայնեւ խորհիմ ասս,
Ու գրիչովքս ծանօթ փանթեղիս,
Գրել յօգուած մը ալիւիւն դեմ խիւս...:

* * *

Խմելով միայն մէկ-երկու գաւաթ,
Թեւ ժաշտեր կան որ ունին հաւաս,
—Անուշտ գլուխմ'ալ ճիշդ պարապ-սակառ—
Թե՛ օղին երբեք չէ վրնասակար:
Չափաւոր կերպով, կրսեն, խմողին
Ջուարքութիւն մը պատճառէ օղին,
Ու մարդուս կուտայ մոռնալ իր ցաւեր,
Եւ ոչ քէ գործէ մարմնին մէջ աւեր:
Բայց ո՛չ, չէ անի երբեք օգտակար,
Ըլլայ մի գաւաթ եւ կամ... մի՛ տակառ,
Քանի որ մէկը կըլլայ ետին անթիւ,
Ու վրայ կուտայ մարդ կեանքն ու պատիւ:
Ով որ կը լսէ օղին չափազանց
Իր բոլոր պատճառներն կընէ այլեւս զանց,
Ու հանչնայ պատիւն ոչ այլոց, ոչ իր,
Եւ մղուի նոյնիսկ գործելու ոճիր:
Ջի ալիւն՝ որուն ժաշտեր աս ու աս
Նղած են մոլի, է մի պատուհաս,
Մեծ չարիք մը որ — տեսնելն չէ դժուար —
Շատ ընտանիքներ ըրած է թուառ:
Քանիքներ արդեօք ալիւիւն համբան
Նղած են մէյմէկ հրէս ու անբան,
Քանիքներ արդեօք ո՛հ, աւաղ օղին
Տարած յանձնած է դեռ խիւս վաղ հողին...
Ինչքան ընտանիք արդեօք կը քանդէ
Աւելի նոյն իսկ ժամատարս քան քէ,
Ու զոհեր կընէ քան քէ *ֆոլերան*
Մարդոց մէջէն յա՛ղթ, հսկայ պէս լեռան...:

Ալիւիւն սեր, երբոր կը խորհիմ,
Մարդոց մէջ որչափ դրած է խոր հիմ,
Երբ կը մտածեմ միտմալս ներհուն (!)
Վըրայ այն բոլոր հետեւանքներուն
Ալիւիւն առթած ո՛հ, հազար տեսակ,
Ջոր ես պարզեցի ու դուք ալ տեսաք
Սոսկում մը կուգայ վրաս, իրաւ որ,
Ու արիւն կերթայ սիրես վիրաւոր...:
Երբ կը խորհիմ քէ կան անանկ մարդեր,
Որոնց ալիւն է մեծ հանդիմ մ'առքեր,
Այնպէս որ դարձած հրէսներ դաժան
Կուզեն միտ մնալ անկէ անբաժան,
Որոնք այլեւս գոհիկ ու ցա՛ծ
Տուն-տեղ, կի՛ն, զաւակ աւա՛ղ, են մոռցած,
Ու փոխանակ գէթ տանելու սեւ հաց
Իրենց անօթի, թուառ զաւակաց՝
Մղուած ալիւի մոլութեան քափեն
Վաստակին բոլոր գինեւուն քափեն,
Ուր սիրեն մնալ մինչեւ կես-գիշեր,
Ջի ընտանիքին բնաւ չեն յիշեր,
Ու յետոյ եղած լոլիկ, անասուն
Դառնան տուն, ու հոն ձգեն վայնասուն,
Պօռան ու կանչեն, հանեն ծեծ ու փէտ
Քանի մը համար ոչինչ ու անպէտ,
Այո՛, յիշելով այս բաներ բոլոր,
Դարձիմ անոնցմէ, որ քայլով մոլոր
Կը վազեն շիտակ Բագոսին տանար,
Կարծելով քէ ան ցաւերուն տայ հար...:
Դեռ չվերջացած իմ այս Ֆանթազի,
Ալիւիւններ, երկու խօսք՝ ձեզի. —
Եթէ ալիւն եք ցարդ պաշտեր, պատուեր,
Ահա ես ձեզի կուտամ արդ պատուեր
Բերանիդ չառնել նոյն իսկ մի գաւաթ,
Եթէ չեք ուզեր հետեւանք գայ վատ,
Կամ քէ պատճառել անանկ արգասիք
Որ հումարիս մարդ ըլլալէ կասիք...:
Երբ այս պատուերներս կէտ առ կէտ պահեք
Կը փրկեք ձեզ ու ընտանիքիդ հեղ,
Իսկ ըստմենքս դաս, խրատ չառի՛ք,
Գիտե՛ք որ պիտի կրեք միտ չարիք...:

Անարագար

ՍՏԵՓՍԷ ՍՏԵՓԱՆԵԱՆ



ՍԵՒԸ ՆԵՐՍ ՃԵՐՄԱԿԸ ԴՈՒՐՍ

[ՍԱՌԸ-ԵԱՐԻ ԿԵԱՆՔԷՆ]

Ընտանեկան կեանքին մէջ, անկումը, չքաւորութիւնը, փճացումը՝ անոր ասոր ըրածին, կերածին, հագածին հասնելու, իրարու հաւատարեւու, զիրար դերազանցելու սին ու պատիր գաղափարներէն յառաջ կուգայ միշտ։ Թէեւ մօրուք չունիմ խօսքս քահանայարար ազդեցիկ ընկու համար, սակայն, երբ քիչ մը մտածէք այս արեւէն ալ պայծառ ճամարտութեան վրայ, իրաւունք պիտի տաք անշուշտ։ Սակայն ցաւօք պէտք է խոստովանինք թէ, այս տեսակ պարագայներու մէջ, գիտակցաբար ինքզինքնին կը նեղենք ու առանց հետեւանքը խորհելու կը նետուինք բացառիկէն բացառիկ ծախքերու ծոցը։

Թէեւ տասնաքանեայ պատուիրանքին մէջ գրուած չէ, սակայն ընտանիքներ կան, որոնք եթէ ամրան եղանակին օգտփոխութեան չերթան մեղքը թաթխուած կղզան ինքզինքնին, և անգամ մը որ հասնին իրենց նպատակին, ալ կսկսին վերոյիշեալ մրցումին, այսինքն, տունին ալէկէն ալէկը, ուսելիքի ֆանքիքին, օր ընդ մէջ հագուստ փոխել, պտոյտի, կառքերու և նաւակներու ծախքերը, վերջապէս այն բոլոր մտքէ դուրս շռայլութիւնները, որոնք օգտփոխութեան անուան տակ կը կատարուին, և որոնք բուն նպատակին չի հասնելէ զատ թերեւս և հաւանականաբար առողջութեան ալ կը վնասեն։

Սեւր ներս ձերմակը դուրս, ասկէ աւելի բացայայտ վերնագիր մը չի կրցայ դնել զըրութեանս ճակատը, քանի որ պիտի պատկերացնեմ այն կարգ մը ընտանիքները, որոնց նիւթական կարողութիւնը բացարձակապէս տուններն խասխաթի ըլլալ կը պահանջէ, ու իրենք անոր ասոր աչքին ունենոր երեւնալու համար բանէ պակաս չեն մնար, կը պատուաւորին կը տքնին ու ձմեռը հաքնելուն կազի սնտուկ կը կոտորեն լուբիա մը խաչելու համար։ Զեզի անհաւատալի կը

թուի թէեւ այս իրողութիւնները, սակայն համոզուեցէք ազնիւ ընթերցողներս թէ ձեր տեսած ձերմակները, իրենց մէջ սեւ կմախք մը ունին, զորս չէք տեսնար։

Սառեալ գացողները կեդրոն մը ունին իրիկունները Բագսը խնկարկելու համար։ Հաճի Միսաքի զբօսարանին պարտէզը, ուր կը դիմեն առ հասարակ ջուրերէն դարձին, ու կը նստին մինչեւ որ ժամը գայ դնելու գլուխը բարձին։

Սառեալ այն ամառանոց գիւղն է, ուր կը դիմեն միջակորեար դասակարգէն արուէք անդամները, այսինքն անոնք՝ որոնք լաւ կը ճանչնան միսին քրվոճը, և լաւ գիտեն հացին քիւլիւ թառաֆը սալցային թաթխաւ ընել, և այլն։

Կիրակի իրիկունն է։ Բոլոր օղափոխները իրենց դուրսի հագուստներնին փաթթուած ա լա խուլի խաբուսի գլխարկներնին գլուխին, շուրջանակի բոլորուած են կեղտոտ սեղաններուն շուրջը, ի հեծուկս իրենց նմաններուն, և ի յարգանս օղին։

Դուրսը փողոցին երկայնքը, գետինները աւելոյ թուցիկ բէշեր, հովէն քշող չորացած սերեւներու պէս տնամնաց օրիորդներու կտեւն ի վար կը սատանին, մինչ տարեց ճատըներ շունչերնին բռնուած ի գուր կը ջանան հասնիլ կտեւուն, սեւ վէժներնուն տակէն ազի քրտինք թափելով։

Մերկերիոս աղա իր տիկնոջ, պաւտըզին և երկու աղջիկներուն հետ Զըրչըռէն դարձին Հաճի Միսաքի զբօսարանին մօտէն կանցնէին երբ տիկինը Լուսիկ խօսք առնելով,

— Ինձի նայէ Մերկերիոս աղա, վայլում է քի ներս մտնանք տէ նստինք, հոս եազըլի եկողը աս վախիթ տուն դառնայ նէ վրան կը խնդան, սա նայէ մնէ վարերը պիլէ նստել են . . .

— Սղէկ ամա կընիկ, ինչ տեղը կայ քի, մասրաֆի բլաքօն մըն ալ հոս բանանք,

հէլպէթ տունը պիտիլիսին տակը երկու մատ պան կայ, մութվախէն ալ տօմաթէս սալաթասի մը կը չինես, եղաւ դնաց, աս մութվախ ներս մտնալու հինգ տասը զրուէն ելլալու է . . .

— Բեզի եօլ էրքեան չեմ հարցուներ կոր, ասանկ պէտք է, ասանկ պիտի ըլլայ, քալեցէք քա աղջիկներ, մենք մտնանք տէ, նայէ նասըլ անիկայ ուշուրմա խույրուղիի պէս ետեւնուս կուգայ, ըսելով պարտէզէն ներս կը մտնան կարգաւ :

— Կընիկ, մէյ մը կը հարցունեմ կոր քի Մէրկերիոսին քէսէն ինչ ջուրի վրայ է տէյի հէ . . .

— Սո՛ւս . . .

— Խազի պէս սըսլամիչ ընելուդ, կտործիկ մը հալէ՛ հասկցիր . . . չունիմ քա . . . մէկ ֆինճան խախվէ ապսպրէք տէ սըրայով մէկ մէկ պուտ ֆըռթէքնէ պիլէ տալիք բարայ չունիմ, կը հասկնամ կոր . . .

Տիկին Լուսիկ, առանց լսելու ամուսնոյն դիտողութիւնը, պարապ սեղան մը կորոչէ ու բոլորը մէկ կը շարունին :

— Բա վճէյ . . . Միրիճանն ալ հոս է է եղեր, սա նայէ նշանածը առեր եկեր է, եռմուռնախնեքուն պերանը երթայ, կէօյեամ քի մեր հալը վախտը տեղը չէ տէյի Բէրուղիկս քիթը չի քայեց . . . ես ալ աս իրիկսն անոր ինքզինքս ցուցնեմ տէ երթայ տէ տեսնայ . . .

— Աղէկ ըսիր քուրուկ, սըռնց խըզ մը ընենք, երթայ տէ ճաթի . . .

— Պանայ պագ ճէվիզի . . . երբմի թանէ վէր . . . կըսէ տիկին Լուսիկ աչքը Միրիճանենց կողմը պաղեցուցած :

Միրիճան ըսած երիտասարդը, իր աղջըկան համար խօսուած, վերջէն չէ առած, հաւայդ երիտասարդին նշանածին և ընտանիքին մօտն են, մեր Մէրկերիոս աղայենք, ու հիմա տիկին Լուսիկ, իր հակառակ կողմին ճոխութիւն, և լիւքս ցուցնել կուզէ :

— Կընիկ, մանտրունք չունիմ ըսինք, բան մը առնելու ըլլաւ նէ առաջ ինծի հարցուր . . .

— Ինծի նայէ Մէրկերիոս աղա, աս գիշեր ինչ պիտի ըլլայ նէ պիտի ըլլայ, ինչ ըսեմ նէ դէմ մի կենար, սա եռմուռնախնեքուն հասկցունեմ պիտի ինչ ըլլալս . . .

— Աղէկ ամա, փարայի պօղուլիչ մըլար տէ ինչ կուզես նէ ան ըրէ, զէրէ բէք եալան եմ . . .

Նոյն ատեն կառսօնը կը մօտենայ . . .

— Ինծի նայեցէք աղջիկներ, անոնց մասան նայեցէք ինչ մէզէ կայ . . .

— Ֆասուլեայ, բաթլիճան թավասի, չան ֆըսթըխի . . .

— Պանա պագ ԽԱՎԵԱՐ կէթիր, անանկ մը կը պօռայ որ Մէրկերիոս աղան նստած տեղէն երկու դիզ վեր կը ցատկէ . . .

— Եալընըլ խավեա՞ր մատամ, պաշկա՞յ . . .

— Պալըդ կէթիր . . . ձայնը աւելի բարձրացնելով, ապութառախու կէթիր . . .

— Բա կընիկ ինչ խալթ կուտես կոր . . .

— Բէք էյի, իչկի՞, պիւա՞, մասթիգա՞յ . . .

— Պանա պագ, չու գոց չիչէլէր վարսա, չու աչտըղըն վագըթ բա՞ֆ էտէր սօյընտան . . .

— Էնմէ պիտի ինչնայ կընիկ, նէֆէսս կը կտրի կոր . . .

— Պաշկա՞յ . . . կըսէ կառսօնը հովառտա ընտանիքի հանդիպած ըլլալու ուրախութենէն արւշիւ :

— Պիր գութու սա սառտէլա . . .

— Պանա տա պիր թագաղ կէթիր . . . կէնիչճէ, չիւնքիւ իչինտէ բաթլայաճաղըմ . . .

— Բա ճանըմ մաւրե՛ր, ասանկ քէռթէյի, նամուսնիս տեղը պիտի պերեմ . . .

— Բա նասըլ տեղը պերել, թիւյ կը տնկես կոր վրան, ըսածներդ երկու ճերմակի կը նայի, ես իսէ . . .

— Ինծի նայէ Բուբուլ, ապսպրելնիքէն ծանս կիմանայի՞ն կոր . . .

— Հապա՞, մայրիկ, բիւթիւն աս թառաֆ տառցեր էին . . .

— Օ՛խ . . . ես ալ ինքզինքս ցուցնեմ տէ էչերու պէս բիւշման թող ըլլայ, կէօյեայ քի իմ հալս վախտս տեղը չէ եղեր հա՞ . . . թող քէօռ աչքերնին տեսնայ հիւմաճուկ . . .

— Կընիկ. ոտքիս տակը մէզառներ կը պացուի կոր . . .

— Իմին ալ սիրտս պախճաներ կը պացուի կոր, ագ ագէն գառա կիւն իչին կըսեն, աս օր մէկին տեղը հարուր պիտի խարճեմ . . .

— Ըռզակներնիդ վրանի՞դ է աղջիկներ . . .

— Ընդհանրապես ալ վրանիս է խելքերնիս ալ, հոգի մընէր . . . սատկիմ նէ թէ֊ փէնին բախեմ պիտի . . .

Նոյն ատեն կառսօնը ահագին թէ֊փսի մը շտկած կը հասնի ու կսկսի սեղանին վրայ շտկել բերածները :

— Ինծի նայէ Բուբուլ, խավեարը ինչն ապուծառախոն, սանկ անոնց թառափը դիր քի երեւայ, եալտըզ պաշլը պիտային շիշէն ալ առջիդ դիր . . .

Մէրկերիոս աղա, որուն աչքերը լեցած էր սրտադողէն, կամաց մը աթոռը կը քշէ կը հեռանայ սեղանէն օտարի պէս, աչքին պոչովը զննելով բերուածին արժէքը :

— Պահա պագ կառսօն, շիշէյի աչարսան շու թառափտա աչ, սանայ պագըըընը վէրիւրիմ . . .

Սպասաւորը երբ նուէրին ձայնը կառնէ, կսկսի ամուր մը թոթուել շիշը, որպէս զի լաւ փրփրի :

— Աղջիկներ, մէկ կողմէն կէրէք, ամա խավեարը հացերնուդ վրայ քսած ատեննիդ աչքերնիդ հոն ըրէք, նայեցէք քի անոնց նայած մէկ վախիթը խավեարին երկնաք . . .

— Մայրիկ չեն նայիր կոր . . .

— Երկու աշուրնին քէօռնայ, չեն քաշեր կոր ան է, ինծի նայէ Կիւլիւզար, բէշըդ վեր առ քիչ մը քի ծակ ծակը չորապանիդ երեւայ . . .

— Մայրիկ ամօթ է . . .

— Էօլիւշիւն քէօռն, չիֆթը երկու մէծիտիեննոց չորապը մինչօք ճառթիէննիդ ալ ցուցունես նէ շան է մարդուս . . . Իբէքճի Ռօպէտթին մալը չէ . . .

— Քա կընիկ խելքիդ եկաւ, բիւթիւն բիւթիւնէ ուէզիլ պիտի ընես չօճուխները . . .

— Տուն սո'ւս, մինակ ուտել խմելդ նայէ, ասանկ քէօթէները չես հասկնար, խելքդ չի պառկիր . . .

— Մայրիկ, տղան կառսօնը կանչեց անկաճն ի վար բան մը ըսաւ . . .

— Կեցիր նայինք ինչ պերել պիտի տայ, կը ճաթի կոր նստած տեղը :

Քիչ մը վերջը, մէկը կուգայ, ահագին խաշած սթաքող մը բռնած ձեռքին մէջ կառ կարմիր, ու կսկսին խօսիլ երիտասարդին հետ, ու վերջապէս սակարկութիւնը չի յարմարիր . . .

— Մայրիկ ըսթախողը չառին, սուղ ուղեց . . .

— Ինծի նայէ, քանի՞ր կուտաս կոր . . .

— Եռսունը զրուշ է ամա մարիկս, դուն քսանը հինգ տուր, նայէ՛, թամ երկու օխայ է . . .

— Մէծիտիէ մը տուր, Մէրկերիոս աղա . . .

— . . .

Հոս դիտելու արժանի է Մէրկերիոս աղայի դիմագիծերուն վայրկենաբար փոխուելը, խելճ մարդը շնչասպառ կը մնայ, առանց խօսք մը բառ մը արտասանելու կարողութիւնը զգալու . . .

— Մէկ մէծիտիէի չեմ ի տար ամա նէ իսէ, դուք եապանճի չէք . . . ըսելով մարդը, ահագին կենդանին սեղանին վրայ կը դնէ . . .

— Մէրկերիոս աղա, մէծիտիէն տաս նէ ծառքդ հավայէն պտտցու քի տեսնան տաւը . . .

— Կընիկ խաճտ ունիս ինծի հա՛, սըտեղը մեռցունե՛ կուզես կոր . . . քա լի՛նչ տեղը կայ քի աստար մէզէն պէրել տուր տէ հիմա ալ աս խառնախօսին տնկըցուցիր . . .

— Տող կելլամ կոր, մարդը կը պէքէյէ կոր, անոնք ալ տիրէկ տիրէկ հոս կը նային կոր . . .

Խեղճ մարդը տեսնալով որ ճարը չի կայ, գրպանին պուճախէն կէս Անգղիական մը կը հանէ ու մարդուն կուտայ . . .

— Աֆէրիմ Մէրկերիոս աղա, մախսուս ապուպրէի նէ չէիր ընէր, աղէկ որ օսկի փարայ հանեցիր . . . Ինծի նայէ Բուբուլ, մատ մը իսկէրմիդ ասդին քաշէ քի աղուոր մը տեսնան օսկի փարայ հանելին . . .

Քիչ վերջը սպասաւորը կառնէ կը տանի ու ստկելով մեծկակ սլնակի մը մէջ սեղանին վրայ կը զետեղէ :

— Ինծի նայէ Բուբուլ, նա սա մատնիս ալ սօլ ծառքդ դիր տէ, պիր տիւղ ան թառափը նայելով ծովը ցուցուր, ծառքով իշարէթներ հանէ քի մատնիներդ տեսնան . . . պիռաներնիդ ալ խմած ատեննիդ պառտախին մէջէն նայեցէք քի կը նային կոր . . .

— Կընիկ կուզեսնէ ալթըն ելլանք, զէրէ թիմառխանային մէջը կը գիտնամ կոր ինքզինք . . .

— Բեզի ի՞նչ կըլլայ կոր, սըւո՛ր նայէ մասրաֆ ընելը ամօթ է . . .

— Աս պիչիմը մասրաֆ ընելը ամօթէն էվէլ էտէպսիզութին է . . .

— Ան քուկին խուռուկութուդ է, թող երթան հասկնան քի մենք կարողութին ունինք մի չունինք մի տէյի . . .

— Քա աղէկ ամա, որի խըզ կընես կոր նէ, անոնց հօրը քսան ոսկի պարտք ունիմ . . . խապա՛ր ես, վաղը մարդը փարաները ուղիւ ըլլայ նէ ի՞նչ ճուղաղ պիտի տամ . . .

— Ձէֆըր պաշխա, պարտքը պաշխա, ան տիք եախա միւսիւին հասկցունեմ պիտի քի, իմ տունս տուն փեսայ դար նէ ասանկ խալեարով, ըստախողով, թէփէն եալորզլը պիւռայով պիտի պէսէմիշ ընէի, իրենց պէս բաթլիճան թալասիով չէ . . .

— Հէրիֆը բաթլիճան թալասի կուտէ կոր ամա, իր փարայոյն է, մէզի պէս կը ուրով, պարտքով չէ՞ եա . . .

Մուծը կոխած էր ալ, բոլոր նստողները զուարթ գլխովութեան մը մէջ օրօրուն, հոս հոն վառուած կաղերու լոյսերուն մէջ կատակներով, զուարթախօսութիւնով կը բօսնուին, ու հիմա Մէրկերիոս աղան կը պատրաստուէր մեկնիլ, ուստի կառսօնը կանչելով,

— Պագսանայ նէ՛ տիր պօռնուսուդ,

— Էլլի իքի պուչուք . . .

— Լուսիկ, կամաց մը կիւլ մատնիդ հանէտէ մասային տակէն ինծի անցուր, կէս ինկիլիզէն երկու ճերմակ մնաց, 12 1/2 ալ վրայ դնելիք մէթալիք չունիմ . . .

— Հիսապ հարցուր ճանըմ, նայինք ի՞նչ է եղէր . . . ինծի ղրկէ ես խօսիմ, պուրայա պագ . . . նէ՛ իչին օ գատար փարայ իսթէեօրսուն . . .

— Հիսապընդ օ գատար մատամ . . .

— Խալեար գա՛չ ղրուշ . . . ապուլթառախո՛ւ . . . թէփէն եալորզլը պիւռա՛ . . .

— Իչիմ վար մատամ, բազարլըք եօք . . .

— Քա նէ տէմէք տիր, վաթճուռնական փարայ մէզէները . . .

— Եմէյէիտիւիդ մատամ, ճառթա ճուռթա կէթիւր կէթիւր տէտինիդ, չիմտի, ալթմըշ փարայ տիօրսընդ . . .

— Քա ծանրդ չի հանեմ Մէրկերիոս աղա . . . փատ ես կըլլեր . . .

— Ինտոր քի ըրիր նէ անանկ ալ տակէն ելիր . . .

— Ծօ վէրմէմ . . . իշտէ օթաւզ քուռուշ, տահա՛ . . .

— Իչիմ վար մատամ . . . օն փարայ քէսէմէմ . . .

Ձայները կը բարձրանան, տիկին Լուսիկ կը փրփրի, կը կարմրի, կը ճերմկի, կառսօնը ալ աւելի կը պոռայ, Մէրկերիոս աղան չորս դին կը նայի 12 1/2 ղրուշ փոխ դրամ գանկու համար բարեկամէ մը :

Քառորդ ժամ այսպէս շարունակուելէ վերջ, կառսօնը, մէջտեղը դրուած երկու մէճիտը առնելով ճարահատ,

— Պիր տահա փարանըդ կէօրէ ճառթա ճուռթա եաբընդ, ըսելով կը մեկնի, մինչ բոլոր ներկայները ասոնք կը դիտէին քրքիշներու մէջ :

Ու երբ բոլոր նստողները, ինչպէս նաև տիկին Լուսիկին խըզ ըրած միւսիւն իր նըշանածը թեւը առած մօտերնուն կանցնէր, կըսէ խնդալով,

— Ըստախողը տօլուն ելա՛ւ, մատամ . . .

* * *

Ահա մեր բարքերէն իրական նմոյշ մը : Մեր մէջ իրարու խըզ ընելու ձգտում մը կայ, չունեցողը ունեւոր կուզէ ցուցնել ինքզինքը, կը ծախսէ, կը պատուաւի, որուն հետեւանքը կըլլայ հրապարակային խախտութիւն :

Այս տեսակ ընտանիքները ըսել կուզեն, սեւը ներս, ճերմակը դուրս :

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

PROFESSEUR ANGEL

Վկայեալ Բարիզի եւ Պեռիսի
համալսարաններէն

Ամէն անոնք, որոնք կուզեն քիչ ժամանակուան մէջ, խիստ դիւրամատչելի պայմաններով հիմնովին սովորիլ Գերմաներէն լեզուն՝ ինչպէս նաև Յրանսերէնը

ԱՌԱՋԻՆ ԱՌԹԻՒ

պէտք է դիմեն Պանդէ-գալիու Բալուգաի վաճառատունը, ուրկէ պիտի կրնան ստանալ հարկ եղած մանրամասնութիւնները դասախօսութեան առթիւ :

ՀԱՆՐԱՏԵՍ

Իր տաք արիւն բնաւորութեան, թէ ընկերական, ամէն մարդու հետ վարուող հանգամանքին համար էր որ զինքը կը սիրէինք, չեմ գիտեր, ընկերութեան աղն ու պղպեղն էր, անոր լրացուցիչ մէկ մասը, վերջապէս անհրաժեշտ մէկ միացման գիծը քաշուած ամբողջ ընկերներուն մէջ, իր չէնշող բնաւորութիւնը դեռ աչքիս դիմացն է որ ահա որոշ գծերով կը պատկերանայ, կը գծագրուի բոլոր գիծերով:

Հաւագոյն գերդաստանի մը շառաւիղն էր ինք, և լաւագոյն տրամադրութիւններով օժտուած, ապագային բան մը ըլլալու խոստումով աւելցուն: Պզտիկ տարիքէն արդէն սկսեր էր վարժուիլ առատաբաշխ մըս խուի, և ան տարիներուն, մեր կարօտ մանկութեան ըղձալի և քիչ մըն ալ նախանձոտ տկնարկով կը հետեւէինք այն ամէն քմահաճոյքներուն կատարման գործով կուտար իր քսակին պարարտութիւնը:

Երիտասարդութիւնն ալ իր մանկութեան շարունակութիւնը եղաւ այս տղուն համար. ստակ ունենալու, ստակ դիզելու տխմար ու ապուշ փիլիսոփայութիւնը երբէք բոյն չ'դրաւ այս տղուն գաղափարներուն մէջ, և լիուրի կատարեց փիլիսոփայութիւնը որ կ'ըսէ. «ստակը կ'ընէ պէտք է սահի երթայ»: Գրիգոր զուարճութենէ զուարճութիւն գլորեցաւ, ապագային, գալիքին հոգը երբեք զինք չ'մաշեցուց, և շարունակաւ կան անձնդիւր կեանքը մեռցուց իր մէջ կեանքի համար ամէն յոռետեսութիւն որ քիչ թէ չատ մեր տառապալից երիտասարդութեան ընկերն էր եղած: Կիներու, աղջիկներու մէջ անցուց իր երիտասարդութեան մէկ մասը և կարգի, կանոնի մարդու պաշտօնական հանգամանքը երբեք այս տղուն բնաւորութեան մասը չ'կտրուց:

* *

Ու իր յանկարծակի անյայտացումը երբեք ինծի չ'զարմացուց. իր կեանքը որ համակ չեղում էր, թերեւս մի և նոյն չեղումով և այս անյայտացումով ուղիղ ճամբու մը մէջ մտնէր, քանի մը օր ետքը իմա-

ցանք որ ելիր Բարիզ գացեր էր թերեւս հոն նոր զուարճութիւններ ստեղծելու, փոխելու այն ժամանցներուն միջավայրը ուրկէ ձանձրացեր էր կ'երեւի թէ: Ու մոռցանք զինքը երկու տարի ետք երբ ալ ուէ լուր, ու է տեղեկութիւն չ'առինք իր վրայ:

Լուղորդներ կան որոնք յանկարծ ջուրին տակ կը սուզին, դուն եզերքէն կը դիտես անոնց խորասուզումը ջուրին մէջ, և որչափ ալ վստահ ըլլաս անոր ճարտարութեանը վրայ, ջրին երեսը ելնելու ուշանալու պարագային կը կասկածիս ու տարտամ վախ մը սիրտդ կը պարուրէ և յուսահատելու, ցաւելու սահմաններուն վրայ կը դեգերիս, երբ յանկարծ լուղորդին վերեւերեւումը կը տեսնէ. կ'ուրախանաս, և զուարթութիւն մը սիրտդ կը լեցնէ յանկարծուստ ձիջդ այս տպաւորութիւնն է որ կ'ունենամ երբ երեք, չորս ամիս առաջ զինքը կը տեսնեմ Թաքսիմ, Լիւքսէնպուրկի առջև,

— Օ՛, բարեւ Գրիգորիկ, ե՛րբ եկար նախինք:

Բըտէնկօթին գոյնը նետեր, խաւերը թափեր են, ու կանանչ գոյն մը, որ սեւին յաջորդն է կը տարածուի կոնակն ի վար, կօշիկները ծամածուռներ ունեցեր են իր լաւ օրերուն պէս:

— Գործերնիս գէշ է Լեւոն, ունեցածնիս չունեցածնիս կորսնցուցինք Բարիզ: Կիները, խել խօլ զուարճութիւնները ամէն ինչ առին տարին ինձմէ. ամիս մըն է հոս եկեր եմ, կարօտութիւնս չափ սահման չունի, ամէն բարեկամներուս գացի, ամէնն ալ երես դարձուցին:

Կը նայիմ իր բըտէնկօթին. գոյնը փախիւր է իր բարեկամներուն պէս և կարօտութեան վայրկեանին նորէն, ուր ամէն մարդ յոռետես կը կտրի, ահա կը ժպտի վերստին, կը կատակէ, անհոգ, ոչինչ փոխուած իր լաւատես տղու հանգամանքէն:

— Խերը անիծեմ, կը վերջացնէ ժրպտելով, ես նորէն կ'ապրիմ, այսօր հոս, վաղը հոն, հոգս, թքեր եմ ամէնուն ալ վրայ:

Եւ թեւէն կը քաշէ երգ մը միմռալով և ես հիացումով կը դիտեմ այս ճշմարիտ կեանքի զաւակը, այս տղան որ երջանկութիւնը

ինքն իրեն իսկ ստեղծելու քիչերու տրուած առաքինութիւնը ունեցեր է իր խմորին մէջ, որ գտեր է բնածիր յատկութիւնը կեանքին ճամբաներուն մէջէն անհոգ անցնելու :

Կը հիանամ իր լաւատես տղու հանգամանքին վրայ և կը դիտեմ բանթալօնին մաշած ծունկերը որոնք խոտոր կը համեմատին այս զուարթունակ դէմքին հետ : Եւ կը մըտածեմ վայրկեան մը թէ երջանկութիւնը դրամը չէ որ կը կազմէ, անհոգութիւնը, սկեպտիկութիւնը միակ ճամբաներն են որոնք կ'ապահովեն մարդս կեանքի պայքարին մէջ զուարթօրէն և զոհութեամբ առաջանալու :

ԼԵՒՈՆ ՇԱԹՐԵԱՆ

ԵՐԱՆՈՒԹԻՒՆ

Մանկիկը իր ընտանիքին գիրկին մեջ
երջանիկ է՝ ժպիտներով շողակաք՝
Միշտ կ'երեւի զուարթութեան շող մ'անշեջ,
Վարդասեպոյր այտերուն վրայ անվրէս :

Հայր, մայր, եղբայր հաւաքուած են անոր շուրջ,
Կը փայտայեն նայումսներով խանդակաք
Իրենց մանկիկն, բոջնիկներն այդ յար անշուրջ,
Կը համբուրեն ու կը շոյեն, կուտան կաք :

Կը նոռուողէ՝ բոջունի պես աս ու ան՝
Ընտանեկան յարկերուն մեջ զուարթուն,
Ձեռմ համբոյրներ կուտայ անոնց մանաւանդ,
Որոնք զինքը կը խաղցեն օրն ի քուն . . . :

Սակա՛յն, չնչին խաչք մը, դժնե մի ակնարկ՝
Կ'արեւ անոր երջանկութիւնն մանկական,
Ու կը շնչուն այտերն անոր նրբեւանգ
Արցունքներով շեղի ու դառն, հոգեկան :

ՍՈՎԵԱՏ ՍԱՐԱՅԵԱՆ



ԼԱՍՏՈՁՈՒՄ

Ամենքն ալ կ'ըսեն՝ քե կը սիրեմ քեզ :
Մոլեռանդ՝ մ'ինչպէս Սուրբը՝ հաւաստին ,
Պատահեմ ունիմ՝ որ դուն ալ կը սիրես .
Ու խնկարկուն ես այս սիրոյ կուռքին :

Բայց մեր սերերուն յաւերժացումին
Համար պէտք է՝ որ նուիրենք անհուն ,
Գորով մը . սիրոյ այն մեծ մեհեանին .
Որուն փութերը կոյտեր են սիրուն :

Ու երգենք միասին՝ երգն անմահութեան ,
Վեա հոգիներուն փրկութեան համար :
Ջի կոյս արտերուն բաղձանքն՝ յաւիտեան
Կը լսեն , երկնի ցոլերն անհամար :

Յայնժամ քող ըսեն կը սիրեն զիրար .
Սերը մեղք չ'ունի . կեանքն է անիկայ ,
Կեանքն անմահներուն՝ սուրբ ու փրկարար :
Ու այդ սրբութեան երկինքն է վկայ :

ՍՏԵՓԱՆ ԽԱՉԱՏՈՒՆԻ

ՀԱՅՈՒՀԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱԲԱԶԱՐ

Այս վարժարանը, զոր կ'վարեն ինն անդամներէ բաղկացած Խնամակալութիւն մը, եւ բնիկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը, հիմնական դաստիարակութիւն մը կուտայ բոլոր իրեն դիմող հայ աղջիկներուն : Կ'աւանդուին բնական, իմաստասիրական, չափակաս եւ այլ գիտութիւններ : Մասնաւոր ոյժ կ'ստուի հայերէն եւ անգլ. լեզուներուն . կ'ուսուցուին նաեւ քուրճերէն եւ Ֆրանսերէն լեզուները : Վարժարանին երկու ընդարձակ եւ օդաւեժ շէնքեր , ինչպէս նաեւ խնամակալութեան երկու բժիշկ անդամներ մեծապէս կ'ապահովեն աւակերտներին առողջութիւնը : Անաստուի երկարուղի , որուն մէկ մասնագիծը մինչեւ քաղաք կ'երկարի , ճամբորդութիւնը խիստ դիւրին եւ հանելի կ'ընծայէ : Գրեթէ օրիկներու քառերեւակն է 12 օմ. ոսկի , զոր երկու մասնաւորով պէտք է հասուցանել : Դաւնակի դասի համար 5 կամ 3 ոսկի կ'պահանջուի , դասառութեան քիւլն համեմատ : Սրբեհոնի դասի համար 2 1/2 ոսկի կ'պահանջուի : Վարժարանին ԻԱ. քառերեւանք կ'սկսի Սեպտ. 13 (Ն.Տ.), Դե. իրիկունը : Վարժարանին նոր յայտագիրն ուզողներուն ձեռք կ'ըրկուի :

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր. Բիքի , Պայպըլ Հաուս , Կ. Պոլիս , կամ գրել Տոմ. Ս. Էֆ. Գալպանեանի , Ասեմապետ Խնամակալութեան , Ասաբազար : 8-4

ԽՆԴՈՒՔ

Սարգիս բարեկամս իր կեանքէն հետեւեալը պատմեց .

— Ծնունդս շատ զարմանալի է , հայրս չուարեր՝ պատուաւ չուրի մը մէջ փաթթեր է զիս :

— Մինչեւ 5 տարեկան ձեռք կերեր եմ , ա՛յլ անկէ վերջ շատ չարածճի եմ եղեր :

— Իրիկունները դպրոցէն վերադարձիս , դրան սեմին վրայ կը նստիմ եւ անցնող դարձող տիկիներուն ձեռքը կը համբուրեմ եղեր , այս վերջիններն ալ յօժարակամ ձեռքերնին կերկնցնեն եղեր , բոլորովին անգիտակ , թէ՛ ինչ տարեկան տղեկ մը ո՛ր աստիճան չարածճի մը կրնայ ըլլալ որ . . . , այլ սակայն զարմանքս հոն է որ , գտնուեր են տիկիներն՝ որոնք միմիայն ձեռքերնին պագցնել տալու փափաքով , դիտմամբ մեր փողոցէն կանցնին կը դառնան եղեր :

— Զմեռը օր մը , հայրս դուռնէն ծրարիկ մը կուտայ ինծի ու կը պատուիրէ որ տանիմ սպասաւորին յանձնեմ , առանց սեղմելու ձեռքերուս մէջ : Ես ծրարին պարուսնակութեանը անտեղեակ , փոխանակ սպասաւորին յանձնելու , անկողններուն անակնկալ մը ընելու համար , ծրարիկը կը տանիմ մօրս շրջագլխատներուն դարակը կը դնեմ ու կը գոցեմ : Պահ մը վերջ փնտրուտութի մը համար կստիպուիմ նոյն այդ դարակը բանալ , բանալուս դարչելի հոտ մըն է քիթս կը բռնէ , հետաքրքրութեամբ գլուխըս դարակին մէջ կը խոթեմ ու ինչ տեսնեմ . ամբողջ մետաքսեայ զգեստները իւղի մէջ թաթխուեր են անգործածելի դառնալու աստիճան : Անմիջապէս ծրարիկը կը մըտաբերեմ եւ ձեռքս կերկնցնեմ պահած տեղէս առնելու զայն , սակայն . ո՛հ , մեծ դժբախտութիւն , ծրարիկին մէջինը տարածուեր է տաքէն , վառն զի սալ-եաղի է եղեր :

Փառաւոր տփոց մը՝ փոխան չարածճիութեան :

— Սուրբիկ շատ աղէկ աղջիկ մըն է :

— Ո՞վ ըսաւ :

— Մայրը . . . :

Տիկինը — Այսօր անտառները պիտի պրտոցնես զիս .

Կռասպանը — Սակայն , տիկին , վախուտեղեր են այդ կողմերը եւ ամէն տեսակ չարագործներ կը շրջագային հոն :

Տիկինը — Դու վախնալիք բան չունիս , քանի որ ես միասին եմ , կը պատասխանէ գեղանի տիկինը :

* * *

Երկու սպասաւորներու մէջ .

Կը տեսնաս կոր սա մուկը , գիշերը դարակին մէջ մտեր , եւ եղած չեղած կերակուրները կերեր եւ քաշելու անկարող վիճակի մէջ պնակին քովը կծկուեր մնացեր է , հիմա ի՞նչ պատասխան պիտի տամ տէրոջս . . .

— Ատոր դիւրին միջոցը կայ , մեկին փորը ճեղքէ տար տիրոջ ցուցուր , որպէս զի կերակուրները տեսնէ ու հաւատայ , ապա թէ ոչ , մեր տէրերը անկարելի է որ առանց ապացոյցի մեր խօսքերուն հաւատան , կը պատասխանէ միամիտ սպասաւորը :

* * *

— Մայրիկ ինծի ծիծ կուտա՞ն :

— Ամօթ է տղաս , եօթը տարեկան տղու համար ծիծ ուտել :

— Բայց անցեալները հայրիկիս կուտալիւ կոր նէ . . . :

* * *

Երկու օրիորդներու մէջ .

— Դիտեմ որ Արմենակը զիս շատ կը սիրէ ու կը տառապի ինծի համար , սակայն անկեղծօրէն ըսեմ որ՝ հոգս անգամ չ'է :

— Կուզե՞ս որ իմացունեմ իրեն քու այս գաղափարդ :

— Կաղաչեմ , երբե՛ք :

— Բայց ինչո՞ւ :

— Եթէ այս աստիճան չի օիրէ ու չի տառապի , հս ի՞նչ բանէ հաճոյք պիտի զգամ . . . , կը պատասխանէ օրիորդը :

* * *

— 20 փարայով աշխարհի շրջանը կրնաս ընել .

— Այո՛ .

— Ուրի՞շ պիտի սկսիս .

— Է՛ն առաջ երկինքէն :

Մ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

[7]

ՀԱՄԱՐՈՂՈՒԹԻՒՆ

ԼՈՒԻ ԺԱՔՕԼԻՕ

ԿԱՊԻԿՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՁ

ՄՐՏԱԳՐԱԻ ՊԱՏԿԵՐ ՄԸ

Անգամ մը, զիպուածը այնպէս բերաւ որ խիստ սրտադրաւ տեսարանի մը ներկայ ըլլանք Կորիւններու կեանքէն: Մայր Կորիւ մըն էր որուն ետեւէն կ'երթային երկու զաւակները, մէկը արդէն մեծ ու կորովի բայց դեռ մանկատի, հազիւ 3-4 տարու, և միւսը հազիւ քաջիւղ նոր սկսած: Աւելի սիրուն և աւելի հաճելի պատկեր մը չէի տեսած երբեք: Մեծ եղբայրը իր ճիշերով և շարժումներով կը կանչէր աւելի փոքրը, զայն իրեն խաղերուն մասնակից ընել հրաւիրելով: Պզտիկն ալ կը փորձէր հետեւիլ, կուզէր քանի մը ոտնուտններ ընել, բայց զուր ճիգ, կը դողդողար իր փոքր սրունքներուն վրայ որոնք հազիւ կրնային կրել անոր մարմինը: Մայրը կը քաջալերէր զայն ձայնով և շարժումներով, ամէն ինչալուն գործումնօք կը վերցնէր և վերջապէս, տեսնելով որ յոգնած է ալ, իր բազուկներուն մէջ կառնուր ձագուկը որ կը սպուկէր, կը քնանար հոն:

Այս վայրկեանին մարդ խիղճէ և սիրտէ զուրկ ըլլալու է իր հրազէնը պարպելու համար և սպանութեան վայր մը դարձնելու անտառին այդ ծաղկաւէտ բացաստանը ուր կը խաղան այս ամենէն աւելի մարդուն նմանող կենդանիները:

Կը յիշեմ թէ ժամանակ մը հիացումով դիտելէ ետք այս տեսարանը և վախճալով որ մի' գուցէ ինծի ընկերացող բնիկները գնդակահար ընելու չփորձուէին դեռատի Կորիւն, որ մեր ծածկուած մացառուտքէն գնդակարձակ մը հեռաւորութեան մէջ էր, յանկարծ ձեռքերս իրար զարկի, ու վայրկենաբար տեսարանը փոխուեցաւ: Մայրը այս անձանօթ ազմուկը լսելով յանկարծ կեցաւ, զաւակներէն մէկը դէպի անոր ցատքեց, լիզին պլուկեցաւ թեւերովը, սրունք-

ները անոր մէջքին վրայ կապեց, և հէգ անասունը միւսն ալ գրկած, այս երկու սիրասուն բեռներովը խոյացաւ թաւուտին մէջ ուր անհետացաւ անմիջապէս:

— Աղէ'կ ըրիք նաւապետ, — ըսաւ մեր առաջնորդը, նշանաւորն Ֆէքուէ, քանի որ բոլոր սպիտակամորթները նաւապետ կը կոչուին բնիկներէն այդ եղերքներուն վրայ. — վայրկեան մըն ալ եթէ անցնէր պիտի սպաննէի մայրը, երկու փոքրիկները ձեռք ձգելու համար:

Այս բնիկին արարքը կրկնապէս վայրագ պիտի ըլլար, որովհետեւ պզտիկ Կորիւները գերութեան մէջ չեն կրնար ապրիլ, իր մօրը ծոցէն խլուած այս կապիկը ոչ միայն չընտելանար բնաւ, այլ ժամանակ մը ետքը կը մեռնի, առանց դադրելու ճանկաւելէ և խածնելէ այն ձեռքը որ կը սնուցանէ զինքը:

Կենդանաբանական և բնախօսական տեսակետով կարգ մը ծանօթութիւններէ ետք, հոս պիտի պատմեմ իմ անձնական ուսումնասիրութիւններս այս եզակի և չանկան բարքերով կենդանիին վրայ, աւելի հրաշապատում դէպքեր և զուարճայի միջադէպեր, որոնց ականատես եղայ Մայամպայի եղերքը, Բոնկոյի մէջ, Նիկէրի ափունքին վրայ իմ կատարած վեցամսեայ ուղեւորութեանս ատեն:

ՀԻՆ ՀԱՄԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Ծանօթացած էի Ափրիկեան եղերքներու վրայ հարկերու վարձակալ Մ. Վալթըրի, որուն երբ փափաք յայտնեցի երկրին ներսերը զննական պտոյտ մը կատարելու, խոստացաւ առաջնորդ մը տալ, որուն հաւատարմութեան վրայ կրնայի վստահիլ:

Իրաւ ալ քանի մը օր ետքը ինծի կը ներկայացնէր Յաներու սեւամորթ ցեղէն հսկայ մը, Նօթուէ անուն, որ օրական իրեն համար մէկ դահեկանի և կնոջն ու զաւ-

կին համար կէս դահեկանի համեստ վարձքով յանձն կ'առնէր առաջնորդել ինծի անտառներուն, անապատներուն և ճախճախուտներուն մէջէն, մինչև Մօղամպիքի եղերքը:

Նօթուէ քիչ մը անգլիներէն կը խօսէր, ինչ որ թանկագին բան մըն էր ինծի համար, որովհետեւ պիտի կրնայի պատմել տալ իր ցեղին յատուկ աւելի կամ նուազ առասպելական պատմութիւնները: Ասկից զատ, անշուշտ գոհ էի որ ամիսներով ինծի հետ ապրողի մը հետ շարժումներու համար և անտանելի լեզուն չպիտի ստիպուէի գործածել, այլ պիտի կրնայի խօսիլ զէշ աղէկ:

Մ. Վալթըր, զայն ներկայացուցած ատեն ըսած էր ինծի.

— Ամէնէն աղէկը աս գտայ: Տասը տարիէ կը ճանչնամ զայն: Իրաւ ստախօս է, գող, գինով՝ իր բոլոր հայրենակիցներուն պէս, բայց ասոր հետ մեկտեղ կրնաք . . . պարծենալ իրմով:

Նօթուէ հսկայ ստամբակ մըն էր, երեսնասի պէս սե, գլուխը դադուր՝ ոչխարի մորթի պէս, և իւր ամբողջ հագուստ, կը կրէր միայն ծառի տափակցած կեղեւէ գօտի մը, որուն առջեւի կողմէն կախուած էր ընձառիւծի մորթ մը: Ակռաները սրածայր էին, ինչ որ անոր կուտային եզական վայրագութեան մը երեւոյթը, կարծես շանաձուկի մը կզակն էր: Մէկ հարուածեան հըրացանով մը զինուած էր, և մեծ, երկու մէթր երկայնութեամբ աղեղով մը: Իր մէջքէն անցուած էր անգլիական պատրաստութեամբ կացին մը, որով կը պարծենար և շատ վարժ էր զայն գործածելուն մէջ: Կը պատկանէր Փան կամ Բանուին ըսուած մարդակեր ցեղին որ կէս-դարէ ի վեր կամաց կամաց կը լեցնէ Ափրիկէի եզերքը և յայտնի չէ թէ ներքին ո՞ր մասերէն մեկնած է:

Նօթուէ կըսէր թէ ինք քաղաքակրթուած էր սպիտակամորթներու հետ չփոխելով և դադրած էր իր նմանները ուտելէ: Ասպետական շարժումով մը կըսէր թէ մարդակերութիւնը կը ձգէր խեղճ բնիկներուն, որոնք դեռ չէին ապրած նաւապետներու և վարձակալներու ընկերութեան մէջ: Ինքզինքը երկրին փրկի ամէնէն հռչակաւոր որսորդը կը նկատէր, և

իրաւ ալ ամէն ատեն փղոսկրի փոխանակութիւն կը կատարէր:

Վիզէն կախած էր խել մը բոժանքներ, որոնց մէջ կային վագրի, կոկորդիլոսի ակռաներ, եղնիկի եղջիւրի կտորներ և ամէն տեսակ ուլունքներ և ապակեղեններ: Ասոնց մէջ ոմանք հմայեկներ էին ինքզինքը պաշտպանելու համար տենդին, վտանգաւոր պատահարներու և օձերու խայթումին դէմ: Ոմանք երջանկութիւն կը բերէին իր աշահներուն մէջ, և նոյն իսկ առաջարկեց ինծի ալ տալ մեկնելէ առաջ, քիչ մը Թօմի փոխարէն, բայց ես մերժեցի շնորհակալութիւն յայտնելով և ժպտելով:

— Գոնէ սա վագրակատուին ակռան առ մօքիսօսներուն դէմ, ըսաւ:

Մօքիսօսները չար ոգիներն են եղեր այդ տեղի անտառներուն, որոնք ճամբորդները կը ձգեն իրենց լարած հալարումէկ ծուղակներուն մէջ: Երբ խնդրեցի որ իր ամէն կախարդութիւններէն զերծ պահէ ինծի, ծանր չեշտով մը յայտարարեց թէ մինչև որ չընդունիմ զանոնք չպիտի ճամբայ ելլէ ինծի հետ: Հակառակ պարագային դժբաղդութիւն պիտի գար զլինուս, վստահ էր ասոր: Մօքիսօսները գոնէ մեղի պիտի մոլորեցնէին և փրկելու փոսի մը մէջ պիտի գլտորէին: Երբ տեսայ որ իրեն խօսք հասկըցնել կարելի չէր, աւելի այդ ակռայի կտորը և գրպանս դրի: Ասիկայ գոհունակութիւն առկեց իրեն:

Նօթուէի կինը, իրմէն աւելի պակաս բան հագուած էր, որովհետեւ փոքր գօտի մը միայն կը կրէր, որուն շուրջը կը կախուէին չուանիկներ, որոնք հազիւ կը ծածկէին իր մերկութիւնը: Բաղձրաբարոյ, համակերպող արարած մըն էր, որ մեր կերակուրները պատրաստելու պաշտօնը ունէր և մեր ջուրը կը կրէր խոշոր դժմանօթներու մէջ: Այս գործերուն մէջ մօրը կ'օժանդակէր զաւակը, դեռատի սե մը գեղադէմ, շուրջ տառնակ մը տարեկան:

(Շարունակելի)

Արտօգրաւէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն — ՃԻԶԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ-Ալի հասէսի քիւ 23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՈՐԵՑԵԱԾՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուլթան Համամ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տուկունութեամբ և գինեբու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն դիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց քէյքոններու և տղայոց չիք և դիմացկուն ֆօքսիւսներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ յերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից։

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ է. Գաւառներէն յանձնարարութիւնը փութով կը կատարուին։

48—50

ՇԷՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, շուտ կը չորնան, վրայ չեն ելներ, դոյններն չեն նետեր, ջուրի և անձրեւի կը դիմանան, մլուկները կը ջնջեն ևն. ևն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 10—15 փարայ։

Ներսի և դուրսի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 20—30 փարայ։

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախորդաց դիւրութեան համար, վաճառատուն պատրաստ է սոյն գներով իր վրայ առնել ամէն գործ, թէ ներկն և թէ գործաւորոյն մէջն ըլլալով։

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-համամ, Պազըր-ճըլար թիւ 26, Գ. Աճէմեան։ — Գաւառները գործախաջներու պէտք կայ, դիւրամասջելի պայմաններով։

13—20

ՖԷՆԻՔՍ ՕԹԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ժրանգ

ՀԻՐԵՃԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Ժրանգ

ՖԷՆԻՔՍ Հաւաքոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և կարասիք։

ՖԷՆԻՔՍ Հաւաքոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային կանքի վրայ։

ՖԷՆԻՔՍ Հաւաքոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չոգեհաւի եւ առաքատանաւի վրայ։

Ընկերութեան գրամատունն է ԲԻԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, Թիւ 11—16։

Ընկերութիւն կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ։

Լիազօր Գերկայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՑԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՑԵՐ

Կ. Պոլիս, Պահճեֆափու, ձեյալ-Պեյ խան, քիւ. 10

Ա Ն Տ Ե Լ Ի Պ
Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՅ ԵՒ ՊԻՏՈՅԻՑ

Մ Ա Ս Ն Ա Ի Ռ Ա Բ Ա Ր



Ֆոնոկրաֆի եւ Գլաններու Կրամֆօնի
եւ Երկկողմ Բլագներու, Կեղրոնա-
տեղի Պահճե Գաբու, Հաճի Պեքիբ
Էֆենտիի կից, Սալտեզ խանի տակ
քիւ. 2 : Մասնաճիւղ Պահճե Գաբու
քիւ. 52 :

Վաճառատան
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանայ տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
շահած համբա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆօններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանայ հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ : Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ :

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
կեդրոնատեղին :